




ԳԵՎՈՐԳՅԱՆ ԺԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
100-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ

**Դեկտեմբերի 15-ին, կիրակի օրը,** Մայր Աթոռում հանդիսավորությամբ նշվում է Գեվորգյան ճեմարանի հիմնադրության 100-ամյակը:

ՊԱՏԱՐԱԳ, ԶԱՐՈՋ ԵՎ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

**Դեկտեմբերի 15-ին, կիրակի օրը,** առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Զավեն եպս. Չինչինյանը:

Ս. պատարագին ներկա են լինում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և հազարավոր ուխտավորներ:

Ս. պատարագի ավարտին պատարագիչ սրբազան հայրը հոգեյից քարոզ է խոսում՝ «Ծանաչել զիմաստություն և զիրատ, իմանալ զբան հանճարոյ» (Առակ. Ա. 1) բնաբանով՝ հանգամանորեն կանգ առնելով օրվա խորհրդի, Գևորգյան ճեմարանի հիմնադրության 100-ամյա հոբելյանի և ճեմարանի հիմնադիր Գևորգ Դ մեծագործ կաթողիկոսի կյանքի և կրթական գործունեության վրա:

Հավարտ ս. պատարագի Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի հանդիսավորությամբ, կատարվում է հոգեհանգստյան

պաշտոն՝ ի հիշատակ Գևորգյան ճեմարանի հիմնադիր Գևորգ Դ Սրբազնապետ Հայրապետի, Գևորգյան ճեմարանի տեսուչների, դասախոսների և պաշտոնյաների:

Այնուհետև կատարվում է «Հոգոց»-ի մասնավոր կարգ երջանկահիշատակ Գևորգ Դ կաթողիկոսի շիրմի վրա:

Ժամը 15-ին միաբանական սեղանատանը տրվում է հոգեճաշ, որին մասնակցում են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրույանը, Եգիպտոսից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Զավեն եպս. Չինչինյանը, Մայր Աթոռի միաբանները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և այլ հրավիրյալներ:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

**Նոյն օրը,** ժամը 18-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում հանդիսավորապես նշվում է Գևորգյան ճեմարանի հիմնադրության 100-ամյակը:

Հանդիսության պատվո սեղանի շուրջ տեղ են գրավում Վեհափառ Հայրապետը, ՀԱՍՀ Միմիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տեղակալ Ս. Հովհաննիսյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ և Գերա-

գույն հոգևոր խորհրդի անդամ **տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը**, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող **տ. Զավեն եպս. Զինչիկյանը** և հոգևոր ճեմարանի տեսուչ **տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը**:

Հանդիսությունը ներկա էին շուրջ 300 հրավիրյալներ, այդ թվում՝ Գերագույն հոգեվոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Գևորգյան ճեմարանի շրջանավարտներ, մտավորականներ և այլ հրավիրյալներ:

Հանդիսությունը սկսվում է ՀՍՍՀ պետական հիմնի նվագով և հայրապետական աղոթքով:

Այնուհետև բացման խոսք է ասում հոգեվոր ճեմարանի տեսուչ **տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը**.

«Վեհափառ Տեր, Դրն. Ա. Հովհաննիսյան, Գերաշնորհ և հոգեշնորհ հայրեր, Սիրելի ներկայներ,

Այսօր հավաքվել ենք նվիրական այս հարկի տակ՝ տոնելու համար հայ դպրոցի պատմության պարծանքը հանդիսացող Գեվորգյան ճեմարանի հիմնադրման 100-ամյակը:

Ամեն մի ժողովուրդ, ամեն մի հաստատություն ու անհատ իր թողած գործերով է հիշելի և անմահ: Այս առումով Հայաստանյայց եկեղեցին դարերի ընթացքում իր երկու առաքելությունները, այն է՝ ժողովրդի քրիստոնեական հավատքի մշտնադրոգ պահպանումը և հայ մշակույթի զարգացումը, կատարել է անմնացորդ նվիրումով:

1441 թվականից, Կիլիկիայից Ամենայն Հայոց Հայրապետության Աթոռի փոխադրությունից հետո, Մայր Աթոռ **ս. Էջմիածինը**, հակառակ քաղաքական, տնտեսական աննպաստ պայմաններին, ամեն ջանք գործադրեց՝ լուսավորության, դպրության և ժողովրդի ազատագրության գործը կենդանի պահելու համար:

Երբ պատմական Հայաստանի մի մասը՝ Արևելահայաստանը, 1827 թ. վերջնականապես ազատագրվեց պարսկական-խանական լծից և միացավ Ռուսաստանին, մեր ժողովրդի այս հատվածը ազատվեց ֆիզիկական բնաջնջումից: Այսպիսով լայն հեռանկարներ բացվեցին նաև հայ մշակույթի զարգացման ասպարեզում:

Այդ օրվանից անցել էր շուրջ կես դար: Հայրենի երկրից դուրս հիմնադրվել էին հայկական դպրոցներ, որոնք կտրված էին հայրենի հողից և ժողովրդից: Ամենայն Հայոց Հայրապետությունը վաղուց մտածում էր Էջմիածնի հովանու տակ, հայրենի երկ-

րում, Վաղարշապատում, հիմնել կրթական բարձրագույն մի հաստատություն:

1874 թվականի սեպտեմբերի 28-ին Գեվորգ Դ երջանկահիշատակ կաթողիկոսին վիճակվեց այդ երազին մարմնացում տալ:

Մեր մտավորականությունը և ժողովուրդը իրենց նյութական ու բարոյական աջակցությամբ սատար հանդիսացան հայրենի հողի վրա հիմնելու այդ հաստատությունը:

Աշխատանքի հրավիրվեցին մանկավարժական մեծ փորձ ունեցող լուսամիտ դասախոսներ, որովհետև երանաշնորհ Գևորգ Դ կաթողիկոսի ցանկությունն էր, որ ճեմարանը «...արժանավոր կուսակրոն հոգևորականներ պատրաստեր, որպեսզի նոքա՝ ըստ նախնական սովորության ազգին՝ նախ մեր ազգի գրականության... ծաղկելուն նըպաստեն...»:

Էջմիածնի ճեմարանը դարձավ համահայկական բարձրագույն կրթական մի հաստատություն: Այստեղ էին գալիս սովորելու մեր ազգի զավակները և՛ Արևմտահայաստանից, և՛ Վրաստանից ու Ռուսաստանի այլ-ևայլ հայաշատ քաղաքներից: Եվ ի նշան երախտագիտության հետագայում ճեմարանը կոչվեց իր հիմնադրի անունով՝ Գևորգյան ճեմարան:

Նրա սաները Էջմիածնի շնչով, Ամենայն Հայոց Հայրապետության օրհնության և հսկողության ներքո աճում էին մարմնով ու դատնում նոր ոգով պատրաստված հայ հոգեվորականներ, մանկավարժներ, պատմաբաններ, արվեստագետներ, գիտության բոլոր բնագավառներում աշխատող մշակներ: Շրջանավարտ շնորհալի սաներից շատերն ուղարկվում էին Գերմանիա, Ռուսաստան՝ իրենց նախընտրած մասնագիտությունների մեջ ավելի խորանալու նպատակով:

Գևորգյան ճեմարանն իր հիմնամյա գոյությամբ հայ մշակույթի պատմության մեջ թողեց ընդգծված հետք: Նրա շրջանավարտների անունների շարքն իսկ պատկառանք է ազդում մեզ: Մեր ժողովրդի երգի արքա Կոմիտաս վարդապետի անունը միայն բավական է՝ անմահացնելու այդ հաստատությունը:

Գևորգյան ճեմարանն արդարացրել է ազգի և Հայրապետության ակնկալությունները:

Գևորգյան ճեմարանի շարունակությունն է հանդիսանում այսօրվա հոգևոր ճեմարանը, որը կյանքի է կոչվել 1945 թվականի նոյեմբերին, նույն ազնիվ նպատակի համար:

Փառք մեր ժողովրդի լուսամիտ բարերարներին, բարեգործական հաստատությունների բոլոր համեստ անդամներին, որոնք իրենց լուսման մուծեցին՝ լույսի աղբյուր հան-

դիսացող Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ճրագը վատ պահելու համար:

Փառք ճեմարանի հիմնադիր երջանկահիշատակ Գևորգ Դ Հայրապետին և նրա ազգ-ընտիր հաջորդներին, որոնք իրենց աչքի լույսի պես պահպանեցին համահայկական հոգևոր, կրթական այս հաստատությունը:

Փառք Գևորգյան ճեմարանի սաներին, որոնք իրենց կրթանվեր, հայրենաշեն աշխատանքներով, ստեղծագործություններով այսօրվա մեր հայրենիքում ստեղծված մշակույթի, արվեստի, գրականության, մանկավարժության առաջին ջահակիրները հանդիսացան:

Այս զգացումներով և մտածումներով թույլ տվեք, Վեհափառ Տեր և սիրելի ներկաներ, այսօրվա հանդեսը, նվիրված Գևորգյան ճեմարանի հիմնադրման 100-ամյակին, համարել բացված:

Հանդիսության Ա մասում Գևորգյան ճեմարանի հիմնադրման ու գործունեության մասին ընդարձակ ու բովանդակալից գեկուցումով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի դասախոս Ս. Անթոսյանը (սույն գեկուցումը կուպագրվի Գևորգյան ճեմարանի 100-ամյակին նվիրված բացատրիկ համարում):

Այնուհետև ողջույնի խոսք է ասում Գեվորգյան ճեմարանի նախկին սան, վաստակավոր մանկավարժ, 95-ամյա պրոֆ. Խ. Կանաչյանը (սույն ողջույնի խոսքը նույնպես կուպագրվի Գևորգյան ճեմարանի 100-ամյակին նվիրված բացատրիկ համարում):

Հանդիսության Ա մասը եզրափակվում է Հայոց Հայրապետի գնահատանքի և օրհնության խոսքով:

Վեհափառ Հայրապետն Իր շնորհակալությունն է հայտնում օրվա գլխավոր բանախոսին՝ նրա բովանդակալից դասախոսության համար, և ապա պրոֆ. Խ. Կանաչյանին՝ նրա այնքան ներշնչյալ և պայծառ հուշերի համար, որոնք կապված էին հոգևոր ճեմարանի պատմության և նրա ուսանողական տարիներին:

Այնուհետև Հայոց Հայրապետը շեշտում է հայկական զգայությանը բնորոշ այն նրկարագիրը, որ մեր ժողովուրդը միշտ էլ իր սրտի մոտ է ընդունել հոգու և մտքի դաստիարակության նվիրական գործը և Լուսավորչի օրերից մինչև մեր ժամանակները հայ

դարության մշակներին անվանել է լուսավորիչներ, «մերոյ լուսաորոշեան լուսաոր վերակացուներ» (Մովսես Խորենացի):

Իր խոսքի ալիարտին Վեհափառ Հայրապետն օրհնում է հիշատակը մանավանդ Գեվորգ Դ լուսամիտ կաթողիկոսի, որն իմաստուն հիմնադիրը հանդիսացավ Գևորգյան ճեմարանի, օրհնում է հիշատակը Գևորգյան ճեմարանի հոգևորական և աշխարհական այն վաստակաշատ մանկավարժներին, որոնք տիպար կրթական հաստատության վերածննդին Գևորգյան ճեմարանը շուրջ կես դար՝ պատրաստելով արժանավոր հոգևորականներ հայ եկեղեցու սպառնի և հայագետներ, մանկավարժներ ու հասարակական գործիչներ:

Տասը րոպե տևող ընդմիջումից հետո սկսվում է հանդիսության Բ՝ գեղարվեստական մասը: Գործադրվում է գեղարվեստական կոկիկ մի ծրագիր:

Պ. Սևակի «Անլուելի զանգակատուն»-ը պոեմից ճեմարանի կյանքին, Կոմիտաս վարդապետի ուսանելու շրջանին և ապա վերագաղթոնքին նվիրված հատվածների ընթերցումով հանդես է գալիս հանրապետության վաստակավոր արտիստուհի, ասմունքով Սիրվարդ Մեսրոպյանը:

«Արի բաղերով», «Աղջկա երգը», «Հորովել» և «Նա մի նազ ունի» երգերի կատարումով հանդես է գալիս Հայֆիլհարմոնիայի բանոնահարների համույթը՝ մեմակատարությամբ հանրապետության վաստակավոր արտիստուհի, երգչուհի Վարդուհի Խաչատրյանի:

Այնուհետև Հայդենի «Աղաժիռ», Սարաատեի «Մալագունեյա», Հաբաներա, Կոմիտաս վարդապետի «Կոունկ» նվագների կատարումով հանդես է գալիս հանրապետության վաստակավոր արտիստ, միջազգային մրցույթների դափնեկիր, ջութակահար Ռուբեն Ահարոնյանը՝ դաշնամուրային ընկերակցությամբ հանրապետության վաստակավոր արտիստուհի Մարիաննա Հարությունյանի:

Վերջում, հանուն Վեհափառ Հայրապետի, շնորհակալական խոսք է ասում տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը՝ օրվա հանդիսությանն իրենց բաժինը բերած բոլոր մասնակիցներին ու ներկաներին:

